

Հայտերի ներկայացման հրավեր

«Մարդու իրավունքների հետազոտումը Հայաստանում. արդի և նոր ձևավորվող հիմնախնդիրներ»

Ռաուլ Վալենբերգի անվան մարդու իրավունքների և մարդասիրական իրավունքի ինստիտուտի կողմից 2024 թ. դեկտեմբերի 3-4-ը Երևանում կազմակերպվելիք միջազգային 2-րդ գիտաժողովը:

Շվեդիայի Լունդի համալսարանի Ռաուլ Վալենբերգի անվան մարդու իրավունքների և մարդասիրական իրավունքի ինստիտուտն (այսուհետև՝ «ՌՎԻ») ուրախությամբ ազդարարում է «Մարդու իրավունքների հետազոտումը Հայաստանում. արդի և նոր ձևավորվող հիմնախնդիրներ» խորագրով միջազգային 2-րդ գիտաժողովի մասին, որը կանցկացվի 2024 թ. դեկտեմբերի 3-4-ը Երևանում: Գիտաժողովը կազմակերպվում է **Հայաստանի ամերիկյան համալսարանի (ՀԱՀ)** հետ համագործակցությամբ:

Գիտաժողովի նպատակն է հարթակ տրամադրել համալսարանականներին, իրավակիրառներին, միջազգային զարգացման գործընկերներին և քաղաքականություն մշակողներին՝ համատեղ ուսումնասիրելու Հայաստանում մարդու իրավունքների արդի և նոր ձևավորվող խնդիրները: Հրավիրում ենք գիտնականներին, ուսանողներին, քաղաքացիական հասարակության ներկայացուցիչներին, իրավակիրառ ոլորտի ներկայացուցիչներին, ներառյալ՝ միջազգային զարգացման գործընկերներին, ներկայացնելու իրենց հետազոտական աշխատանքները՝ խրախուսելով այնպիսի հայտերը, որոնք ձգտում են հասել ներգիտակարգային սահմանները և կամիջել տարբեր գիտակարգերը, ինչպես նաև տեսությունն ու պրակտիկան:

Գիտաժողովը ՌՎԻ հայաստանյան 2022-2025 թթ. ծրագրի մի մասն է, որի նպատակն է աջակցել Հայաստանում մարդու իրավունքների բարձրակարգ հետազոտությունների իրականացմանը և մարդու իրավունքների հետազոտությունների ոլորտում միջոլորտային համագործակցության հնարավորություններ ստեղծել: Գիտաժողովի մասնակից բանախոսներին հետագայում հնարավորություն կտրվի դիմելու շարունակական աջակցության և դրամաշնորհների ու միջազգային հետազոտական այցերի/փոխանակումների միջոցով զարգացնելու իրենց հետազոտությունները: Ընտրված մասնակիցները նաև կունենան իրենց աշխատանքները գիտաժողովի նյութերի ժողովածուում հրապարակելու հնարավորություն: Այս երկու հնարավորությունների մասին մանրամասները շարադրված են հայտարարության վերջում:

Նախապատմություն

Հայաստանը կանգնած է մարդու իրավունքների հրատապ մարտահրավերների առջև, որոնք էլ ավելի են սրվում ինչպես ներքին համակարգային խնդիրների, այնպես էլ արտաքին աշխարհաքաղաքական ճնշումների պատճառով: Երկրում մարդու իրավունքների վիճակի վրա ազդում են այնպիսի հիմնախնդիրներ, ինչպիսիք են հակամարտությունը և դրա հետևանքները, Էկոլոգիական դեգրադացիան, գենդերային անհավասարությունը, կոռուպցիան և արդարադատության անլիարժեք հասանելիությունը: Այս հիմնախնդիրները ոչ միայն կառավարման հարց են, այլև խոչընդոտում են Հայաստանում մարդու իրավունքների չափորոշիչները պահպանելուն:

Մարդու իրավունքների վերոհիշյալ մտահոգությունները ՌԿԻ հայաստանյան ծրագրի (2022-2025 թթ.) թիրախում են: Ծրագրի առանցքում համալսարանների, քաղաքացիական հասարակության և պետական կառույցների միջև համագործակցության ամրապնդումն է: Այս գիտաժողովի նպատակն է ի մի բերել շահագրգիռ բազմազան կողմերի՝ հետազոտողներից մինչև իրավակիրառներ, և ուսումնասիրել Հայաստանում մարդու իրավունքների մարտահրավերների լուծման արդյունավետ եղանակները, առաջադրել քաղաքականության այնպիսի առաջարկներ, որոնք արտացոլում են ՌԿԻ ներկայիս հանձնառությունները՝ կապված մարդու իրավունքների, հավասարության և կենսակայուն զարգացման հետ:

Այս տարի գիտաժողովին հրավիրվել են նաև միջազգային մասնակիցներ, որոնք հետազոտական թեմաները առնչվում են Հայաստանում, ինչի շնորհիվ կընդլայնվի երկխոսությունը երկրի սահմաններից դուրս: Բացի դրանից՝ 2024 թ. գիտաժողովը աչքի կընկնի Հայաստանի պետական կառուցներից բարձրաստիճան ներկայացուցիչների, միջազգային զարգացման գործընկերների, քաղաքացիական հասարակության կազմակերպությունների մասնակցությամբ լիազումար նիստերով և բանախոսների քննարկումներով: Գիտաժողովը կխթանի մարդու իրավունքների խնդիրների լուծման ուղղությամբ շահագրգիռ կողմերի լայնընդգրկուն մասնակցության մոտեցումը:

Նպատակները

1. **Վարել բազմաոլորտային երկխոսություն**՝ Հայաստանում մարդու իրավունքների հրատապ խնդիրների շուրջ արդյունավետ երկխոսությունների մեջ ներգրավելով գիտնականներին, քաղաքացիական հասարակությանը, պետական ներկայացուցիչներին և միջազգային կազմակերպություններին:
2. **Մշակել լուծումներ սոր ձևավորվող մարտահրավերներին**՝ քննարկման դնելով գործնական և քաղաքականության մշակմանը միտված այնպիսի լուծումներ, որոնք առնչվում են հակամարտությունների կարգավորման մեջ մարդու իրավունքների, բնապահպանական արդարության, լուսանցքավորված համայնքների կրթության հասանելիության և գենդերային հավասարության հարցերին:

3. **Ամրապնդել Հայաստանում մարդու իրավունքների պաշտպանության ինստիտուցիոնալ և իրավական շրջանակը՝** հետազոտությունների և լավագույն պրակտիկաների ուսումնասիրության վրա հիմնված որոշումների միջոցով:
4. **Խթանել անդրսահմանային համագործակցությունը՝** հայաստանյան և միջազգային մասնակիցների համար ստեղծելով գիտելիքի փոխանակման, շփման, հետազա հետազոտական և գործնական նախաձեռնությունների շուրջ համագործակցելու հնարավորություններ:

Գիտաժողովի հիմնական թեմաները

Հատկապես կողջունվեն հետևյալ թեմաների շուրջ հայտերը (առանց սահմանափակվելու դրանցով).

1. **Մարդու իրավունքները և հակամարտությունների լուծումը**
 - Մարդու իրավունքների և հակամարտության փոխհատումը՝ Լեռնային Ղարաբաղի իրավիճակի և տարածաշրջանում դրա թողած ազդեցության օրինակով
 - Անցումային արդարադատության մեխանիզմները և դրանց դերը հետհակամարտային կարգավորման ժամանակ
 - Փախստականների, տեղահանվածների և խոցելի խմբերի իրավունքները հակամարտության ազդակիր շրջաններում
2. **Մարդու իրավունքները և բնական միջավայրը**
 - Կլիմայի փոփոխության ազդեցությունը մարդու իրավունքների վրա, մասնավորապես՝ մարդկանց առողջության, պարենային ապահովության և կենսամակարդակի տեսանկյունից
 - Մասնավոր ոլորտի պատասխանատվությունը և բնապահպանական իրավունքները կենսակայուն զարգացման տեսանկյունից
 - Հայաստանում բնապահպանական արդարությունն առաջխաղացելու ռազմավարությունները
3. **Գենդերը և մարդու իրավունքները**
 - Գենդերային անհավասարության և բռնության խնդրի լուծումը՝ ուշադրություն դարձնելով մշակութային և համակարգային խոչընդոտների հարցին
 - Իրավական շրջանակների (փաստաթղթերի) և քաղաքացիական հասարակության դերը կանանց իրավունքների առաջխաղացման մեջ
 - Գենդերը, աղքատությունը և տնտեսական իրավունքները՝ սոցիալական և տնտեսական անհավասարությունների փոխհատումների ուսումնասիրություն
4. **Օրենքի գերակայությունը, արդարադատության հասանելիությունը և կոռուպցիան**
 - Խոցելի խմբերի համար արդարադատության հասանելիության խոչընդոտները

- Կոռուպցիայի բացասական ազդեցությունը մարդու իրավունքների պաշտպանության և օրենքով սահմանված երաշխիքների վրա
 - Ինչ հնարավոր իրավական բարեփոխումների և ռազմավարությունների միջոցով կարելի է բարձրացնել Հայաստանի արդարադատական համակարգի թափանցիկությունը և հաշվետվողականությունը
- 5. Կրթության հասանելիությունը և մարդու իրավունքները**
- **Կրթական անհավասարությունը.** Կրթության անհավասար հասանելիությունը հատկապես լուսանցքավորված համայնքների համար, որոնց թվում են տեղահանվածները և գյուղաբնակները
 - **Մարդու իրավունքների կրթությունը.** դրա դերը հանդուրժողականություն, ներառականություն և զորեղացում սերմանելու հարցում՝ հատկապես երիտասարդների և լուսանցքավորված խմբերի շրջանում
 - **Ներառական կրթությանը միտված իրավական շրջանակը.** որակյալ կրթության հավասար հասանելիությունն ապահովելու հարցում Հայաստանի իրավական պարտավորությունները մարդու իրավունքների միջազգային կոնվենցիաների ներքո
 - **Կրթության և սոցիալական արդարության փոխհատումը.** թե ինչպես կարող է կրթությունը աղքատության, գենդերային անհավասարության, խտրականության դեմ պայքարներում ծառայել որպես գործիք
 - **Կրթական նորարար մոտեցումները.** թվային տեխնոլոգիաների և կրթական այլընտրանքային մոդելների դերը բոլորի համար հավասար հիմունքներով կրթության հասանելիությունը բարձրացնելու հարցում
- 6. Մարդու իրավունքները և աղքատությունը**
- Ինչպես են տնտեսական անհավասարությունները նպաստում մարդու իրավունքների խախտումներին. աղքատության նվազեցման ռազմավարությունները
 - Լուսանցքավորված խմբերի զորեղացումը տնտեսական զարգացման իրավունքահենք մոտեցումների միջոցով (human rights based approach to economic development)
 - Աղքատության, բնական միջավայրի դեգրադացիայի և մարդու իրավունքների միջև կապը
- 7. Մարդու իրավունքները և թվային տեխնոլոգիաներն ու արհեստական բանականությունը (ԱԲ)**
- Արհեստական բանականության և թվային տեխնոլոգիաների ազդեցությունը մարդու իրավունքների, անձնական կյանքի և տվյալների անվտանգության վրա
 - ԱԲ-ի դերը իրավունքների առաջխաղացման կամ խախտման հարցում, մասնավորապես այնպիսի ոլորտներում, ինչպիսիք են՝ մարդու նկատմամբ հսկողությունը, ավտոմատացված որոշումների կայացումը և թվային ինքնության համակարգերը

- ԱԲ-ի կողմից մարդու իրավունքների խախտման ռիսկերի մեղմացման եղանակները՝ միևնույն ժամանակ առավելագույնի հասցնելով հասարակական բարիք առաջխաղացելու դրա պոտենցիալը
- 8. Մարդու իրավունքները և խտրականության բացառումն ու ներառականությունը**
- Լուսանցքավորված խմբերի, մասնավորապես՝ էթնիկ փոքրամասնությունների, ԼԳԲՏԶ+ անձանց, հաշմանդամություն ունեցողների և այլոց նկատմամբ խտրականության բացառումը և նրանց ներառումը ապահովելու հետ կապված մարտահրավերները
 - Բոլորի նկատմամբ հավասար հիմունքով վերաբերմունքի և հնարավորությունների ապահովման իրավական շրջանակները, քաղաքականությունները և պրակտիկաները
 - Կրթության և հանրային իրազեկման դերը ներառական հասարակություն լինելու հարցում
- 9. Բիզնեսը և մարդու իրավունքները**
- Տնտեսվարողների պատասխանատվությունը մարդու իրավունքները հարգելու առումով, մասնավորապես՝ աշխատողների իրավունքների, բնական միջավայրի վրա ազդեցության և կորպորատիվ կառավարման համատեքստերում
 - Տնտեսվարողներին պատասխանատվության ենթարկելու հետ կապված դժվարությունները, երբ նրանք խախտում են մարդու իրավունքները ապրանքային շղթայի գլոբալ շղթաներում (global supply chains)
 - Կորպորատիվ սոցիալական պատասխանատվություն և էթիկապես ընդունելի բիզնես պրակտիկաներ խթանող նորարար մոտեցումները:

Ակնկալվող արդյունքները

- **Քաղաքականության առաջարկներ**, որոնք բխում են գիտաժողովի քննարկումներից և անդրադառնում են Հայաստանում առկա մարդու իրավունքների հրատապ մարտահրավերներին, ինչպիսին, օրինակ՝ կրթության հասանելիությունն է:
- **Հետազոտական համագործակցություններ** հայաստանյան և միջազգային հաստատությունների միջև՝ ուղղված մարդու իրավունքների հետազոտումն առաջ մղելուն և տեղական կարողություններն ամրապնդելուն:
- **Գործողությունների ծրագրեր**, որոնք կներգծեն մարդու իրավունքների սկզբունքները կենտրոնական և տեղական կառավարման մարմինների ծրագրերում, հատկապես՝ կրթական բարեփոխումներում:

Հետազոտական կրթաթոշակի հնարավորություն

Գիտաժողովի մասնակիցներին կընձեռնվի հետազոտական կրթաթոշակի դիմելու բացառիկ հնարավորություն: Հետազոտական կրթաթոշակների ծրագիրը համատեղ իրականացնելու են ՌԿԻ-ն և ՀԱՀ-ը: Ընտրված մասնակիցներին կընձեռնվի երկու հաստատությունների ընդարձակ ռեսուրսներից և անվանի գիտնականների մասնագիտական ուղղորդումից օգտվելու հնարավորություն: Այս նախաձեռնության նպատակն է խորացնել մասնակիցների ներգրավվածությունը մարդու իրավունքների հետազոտման և պրակտիկայի հարցերում՝ նրանց տրամադրելով անհատականացված ուղղորդում և աջակցություն իրենց նախագծերի և հետազոտական ծրագրերի մշակման հարցում: Կրթաթոշակառուները կունենան համաշխարհային փորձագետների հետ կապեր հաստատելու, իրենց մասնագիտական փորձը հարստացնելու և հետազոտական կարողություններն ընդլայնելու հնարավորություն:

Գիտաժողովի նյութերի ժողովածու

Բացի հետազոտական կրթաթոշակի հնարավորությունից՝ մասնակիցները կունենան նաև գիտաժողովի նյութերի ժողովածուում տպագրվելու հնարավորություն: Հետազոտողների ու իրավակիրառների համար ժողովածուին կծառայի որպես իրենց աշխատանքները լայն լսարաններին ներկայացնելու գերազանց հարթակ՝ այդպիսով ընդլայնելով դրանց տեսանելիությունը և ազդեցությունը: Ընտրված նյութերի այսօրինակ շեշտադրումը կբարձրացնի հեղինակների հետազոտական համբավը և մասնագիտական վարկանիշը:

Մասնակիցները

Մասնակիցների լայն շրջանակը կընդգրկի՝

- **համալսարանականների և հետազոտողների՝** ինչպես հայաստանյան, այնպես էլ միջազգային, որոնց մասնագիտացումը մարդու իրավունքների, իրավագիտության, կրթության և գենդերային հետազոտությունների ուղղությամբ է,
- **քաղաքացիական հասարակության կազմակերպությունների՝** ինչպես հայաստանյան, այնպես էլ միջազգային, որոնք աշխատում են մարդու իրավունքների ջատագովության, կրթության հասանելիության և կարողությունների զարգացման ուղղությամբ,
- **պետական մարմինների ներկայացուցիչների,** ներառյալ՝ Հայաստանում քաղաքականություն մշակողների և գործադիր պաշտոնյաների, որոնք պատասխանատու են մարդու իրավունքների քաղաքականության ձևակերպման և իրականացման համար,
- **միջազգային կազմակերպությունների,** ներառյալ՝ մարդու իրավունքների միջազգային մարմինների և զարգացման գործակալությունների ներկայացուցիչների:

Առաջարկների հայտերը

Հրավիրում ենք ներկայացնել ինչպես անհատական, այնպես էլ մեկ խորագրի ներքո հանդես եկող բանախոսների խմբային հայտեր վերը նշված թեմաների շուրջ: Կարելի է ներկայացնել նաև մարդու իրավունքների ավելի լայն շրջանակի մեջ մտնող այլ թեմաներով հայտեր: Մեկ խորագրի ներքո հանդես եկող բանախոսների խմբային հայտը պետք է ներառի 3 կամ չորս հետազոտական աշխատանք, ինչպես նաև քննարկման վարողի և քննախոսի մասին տեղեկություններ:

Անհատական հայտերում պահանջվում է ներկայացնել՝

- Բանախոսության վերնագիրը (առավելագույնը 15 բառ յուրաքանչյուր վերնագրի համար)
- Բանախոսության սեղմագիրը (առավելագույնը 500 բառ)
- Բանախոսի մասին կենսագրական սեղմ տեղեկություններ (մինչև 350 բառ)

Մեկ խորագրի ներքո հանդես եկող բանախոսների խմբային հայտի համար պահանջվում է ներկայացնել՝

- Խորագրի վերնագիրը (առավելագույնը 15 բառ)
- Բանախոսությունների ընդհանուր թեման (առավելագույնը 500 բառ)
- Մեկ խորագրի ներքո ներկայացվող բանախոսություններին առնչվող բանալի բառերը
- Յուրաքանչյուր բանախոսի հետ կապ հաստատելու և կենսագրական սեղմ տեղեկություններ, ներառյալ՝ անուն-ազգանունը, պաշտոնը/զբաղմունքը, էլեկտրոնային հասցեն և մինչև 350 բառով կենսագրական տվյալներ:

Սեղմագրերը պետք է ներկայացվեն մինչև 2024 թ. նոյեմբերի 10-ը: Գիտաժողովին կներկայացվեն սահմանափակ թվով աշխատանքներ՝ պայմանավորված ժամանակային սահմանափակումներով:

Սեղմագրերը պետք է ուղարկել Էլինա Ամիրջանյանին՝ հետևյալ էլ-հասցեով՝ Elina.amirjanyan@rwi.lu.se

Լեզուն

Հետազոտական աշխատանքները կարելի է ներկայացնել ինչպես հայերեն, այնպես էլ անգլերեն լեզուներով: Գիտաժողովի ընթացքում մեկ խորագրի ներքո հանդես եկող խմբային, ինչպես նաև անհատական բանախոսությունները նույնպես կարող են ներկայացվել ինչպես հայերեն, այնպես էլ անգլերեն:

Մասնակիցների գրանցում

Գիտաժողովը բաց է գիտնականների, ուսանողների, քաղաքացիական հասարակության ներկայացուցիչների, քաղաքականություն մշակողների և որոշումներ կայացնողների առջև, որոնք ներգրավված կամ հետաքրքրված են Հայաստանում մարդու իրավունքների հետազոտմամբ: Գիտաժողովը կընդունի մինչև **100 մասնակցի**: Հետազոտական աշխատանք չներկայացնող կամ բանախոսների խմբում չներառված անձինք պետք է գրանցվեն հետևյալ [հղումով](#).

Վայրը

Գիտաժողովը կանցկացվի **Երևանում 2024 թ. դեկտեմբերի 3-4-ը** և բաղկացած կլինի անհատական զեկուցումներից, մեկ խորագրի ներքո հանդես եկող խմբային բանախոսություններից և թեմատիկ աշխատարաններից: Այս տարվա գիտաժողովի լիագումար նիստերին կմասնակցեն բարձրաստիճան պաշտոնյաներ, ներկայացուցիչներ միջազգային զարգացման գործակալություններից և քաղաքացիական հասարակությունից:

Հավելյալ տեղեկությունների համար դիմել հետևյալ հասցեով՝ arman.gasparyan@rwi.lu.se :